



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2026 թվականի թիվ 69-Ա

ք. Երևան

ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 12-րդ մասի և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ և 11-րդ հոդվածների դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է**.

1. Հրապարակել

1) տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ եզրակացությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները՝ համաձայն N 2 հավելվածի:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Գ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

12 հունիսի 2026թ.

ք. Երևան

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 8-ԻՑ ՀՈՒՆԻՍԻ 5-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ
ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԵՐԹԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության նախագահի 2026 թվականի փետրվարի 6-ի թիվ ՆՀ-21-Ն հրամանագրի համաձայն՝ Ազգային ժողովի հերթական ընտրությունը նշանակվել է 2026 թվականի հունիսի 7-ին: «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Ընտրական օրենսգիրք) 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների (այսուհետ նաև՝ Ընտրություններ) նախընտրական քարոզչության ժամանակահատվածն է 08.05.2026թ. – 05.06.2026թ. մինչև ժամը 24:00:

Նախընտրական քարոզչության համար ընտրական օրենսդրությամբ սահմանված տեսալսողական մեդիա ոլորտը կարգավորող բոլոր միջոցառումների կազմակերպման նախապատրաստական աշխատանքները Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) կողմից կատարվել են մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը, ինչն ապահովել է բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմաններ և հնարավորություններ հենց նախընտրական քարոզչության մեկնարկի առաջին իսկ օրվանից:

Այսպիսով, Հանձնաժողովը 2026 թվականի փետրվարի 11-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հանրային տեսալսողական և հանրային լսողական հեռարձակողի վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը սահմանելու մասին» թիվ 18-Ա որոշումը, որի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը հանրային տեսալսողական հեռարձակողի «Առաջին ալիք» տեսալսողական ծրագրի համար սահմանվել է 45 000 դրամ (ներառյալ ԱԱՀ), «Առաջինի լրատվական ալիք» տեսալսողական ծրագրի համար՝ 18 000 դրամ (ներառյալ ԱԱՀ), իսկ հանրային լսողական հեռարձակողի համար՝ 1 800 դրամ (ներառյալ ԱԱՀ):

Հանձնաժողովը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար ոչ խտրական պայմանների, իսկ քաղաքացիների (ընտրողների) համար անկողմնակալ, ստուգված և հավաստի տեղեկատվություն ստանալու իրավունքի ապահովման նպատակով 2026 թվականի փետրվարի 11-ին ընդունել է նաև «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական

ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 19-Ա որոշումը:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) նախընտրական քարոզչություն իրականացնելու համար եթերաժամ տրամադրող մասնավոր հիմունքներով հեռարձակում իրականացնող տեսալսողական մեդիաձառայություն մատուցողներն Ազգային ժողովի ընտրություններ նշանակելու մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 5 օր հետո իրենց եթերով հրապարակում են իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը, որը չի կարող գերազանցել ընտրությունների նշանակմանը նախորդող վերջին վեց ամսվա համար առևտրային գովազդի միջին արժեքը, և որը մինչև նախընտրական քարոզչության ավարտը չի կարող փոփոխվել:

Նշված տեղեկատվությունը վճարովի եթերաժամ տրամադրող տեսալսողական մեդիաձառայությունների կողմից հրապարակվել է մինչև 2026 թվականի փետրվարի 12-ը ներառյալ:¹

Վճարովի եթերաժամ տրամադրելու վերաբերյալ լիցենզավորված ընկերություններից տեղեկատվություն տարածել են հետևյալ ընկերությունները՝

- Հանրապետական սփռում ունեցող չորս տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերություններ իրենց կողմից հեռարձակվող «ԿԵՆՏՐՈՆ», «ԱՐՄԵՆԻԱ», «Ա-ԹԻՎԻ» և «ՇԱՆԹ» տեսալսողական ծրագրերով.
- Մայրաքաղաքային սփռում ունեցող չորս տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերություններ իրենց կողմից հեռարձակվող «5-ՐԴ ԱԼԻՔ», «ՖՐԻ ՆՅՈՒՉ», «21 ԹԻՎԻ» և «ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» տեսալսողական ծրագրերով.
- Մարզային սփռում ունեցող ինը տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերություններ իրենց կողմից հեռարձակվող «ԴԵԼՏԱ ԹԻՎԻ», «ԱՐԱՐԱՏ ԹԻՎԻ», «ԱՐՄԱ ԹԻՎԻ», «ԳԵՂԱՄԱ», «ՖՈՐՏՈՒՆԱ», «ԿՈՏԱՅՔ ԹԻՎԻ», «ՑԱՅԳ», «ՍՅՈՒՆԻՔ ԹԻՎԻ» (սփռման տարածք՝ Սյունիքի և Վայոց ձորի մարզեր) և «ՏԱՎՈՒՇ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրերով.
- Հանրապետական սփռում ունեցող երկու լսողական մեդիաձառայություն մատուցող ընկերություններ իրենց կողմից հեռարձակվող «ՌԱԴԻՈ ԶԱՆ» և «ՌԱԴԻՈ ՀԱՅ» լսողական ծրագրերով.
- Մայրաքաղաքային սփռում ունեցող ինը լսողական մեդիաձառայություն մատուցող ընկերություններ իրենց կողմից հեռարձակվող «ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ», «ՌԱԴԻՈ ՇԱՆՍՈՆ», «ՓՈՓ ԷՖԷՄ», «ԳՈՐԾԱՐԱՐ ԱԼԻՔ ԷՖԷՄ 106.5», «ԷՖԷՄ-105.5», «ՌԱԴԻՈ ՎԱՆ», «ՌԱԴԻՈ ՄԱՐՇԱԼ», «ԶԱՐԿ ԷՖԷՄ» և «ԼԱՎ ԷՖ ԷՄ» լսողական ծրագրերով.
- Մարզային սփռում ունեցող չորս լսողական մեդիաձառայություն մատուցող ընկերություններ իրենց կողմից հեռարձակվող «ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ», «ՄԻԳ ՌԱԴԻՈ», «ՇԱՆԹ» և «ՌԱԴԻՈ ՎԱՆ ԳՅՈՒՄՐԻ» լսողական ծրագրերով:

Միայն հեղինակազորված² ընկերություններից վճարովի եթերաժամ տրամադրելու վերաբերյալ տեղեկատվություն տարածել են ինը տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերություններ իրենց կողմից հեռարձակվող «ԼՈՒԻ», «ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ», «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ», «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ», «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ»,

¹ Նշվածին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ <https://tvradio.am/wp-content/uploads/2026/02/Mek-rope-2026.pdf>

² Միայն ցանցային օպերատորի միջոցով հեռարձակողներ:

«ԵՎՐՈՄԵԴԻԱ24», «ԷՅ ԲԻ ՍԻ ՄԵԴԻԱ», «ՄԻԳ ԹԻՎԻ» և «ՇԱՆԹ ԳՅՈՒՄՐԻ» տեսալսողական ծրագրերով:

«ԷՅ ԲԻ ՍԻ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունը թեպետ հայտարարել էր Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքներին նախընտրական քարոզչության համար տրամադրվող վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը, սակայն այս ժամանակահատվածում չի վերահաղորդվել ցանցային օպերատորների միջոցով, ուստի դուրս է Հանձնաժողովի կարգավորումների շրջանակից:

Հարկ է նշել նաև, որ այն մեդիաձառայություն մատուցող ընկերությունները, որոնք թեև հրապարակել էին իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը, սակայն նախընտրական քարոզչության այս ժամանակահատվածում վճարովի կարգով տրամադրված եթերաժամ չեն ունեցել, չեն ներառվել հավելված 2-ում:

2026 թվականի մայիսի 31-ից դադարեցվել են «ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊ («ՆՈՒՌ» ծրագիր) և «ԱՐԱՆԵԱ» ՍՊ ընկերությունների («ԱՐՄԱ ԹԻՎԻ» ծրագիր) լիցենզիաների գործողության ժամկետները, ուստի նշված ծրագրերի մասով հավելված 2-ում արտացոլված են թվային ցուցանիշները մինչև հեռարձակման դադարեցումը:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն ու Եվրոպայի խորհուրդը «Խոսքի և մամուլի ազատության և տեղեկատվության հասանելիության խթանումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում մայիսի 6-ին անցկացրել են համատեղ աշխատաժողով «Ազգային ժողովի ընտրությունների լուսաբանման և նախընտրական քարոզչության առանձնահատկությունները» թեմայով: Իսկ 2026 թվականի մայիսի 7-ին Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական շտաբների ներկայացուցիչների համար Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը կազմակերպել է հանդիպում-խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը, ինչպես նաև ընտրական օրենսդրության պահանջները:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐ

Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների համար գրանցվել են հետևյալ կուսակցություններն ու դաշինքները՝

- ՌԵՖՈՐՄԻՍՏՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
- «ԲՈՂՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ» ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
- «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՆՈՐՀԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
- «ՆՈՐ ՈՒԺ» ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
- «ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
- «ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
- «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲԵՎԵՌ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
- ՔՈԶԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԵՎ ԱԶԳԻ ԶԱՐԹՈՆՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
- ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
- «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ՔՐԻՍՏՈՆԵԱ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
- «ԱԼՅԱՆՍ» ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՅԵՆՏՐԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
- «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
- ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՕՐԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
- «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
- ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ԱՌԱՋ» ԱՋԱԿԵՆՏՐՈՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)
- «ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
- «ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 26-ի N 211-Ա որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող «Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցության ընտրական ցուցակի գրանցումը:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Տեսալսողական և լսողական հաղորդումներ հեռարձակող տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը:

2026 թվականի մայիսի 8-ից հունիսի 5-ը ներառյալ, ինչպես նաև քվեարկության և դրան նախորդող օրը Հանձնաժողովն իրականացրել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տեսալսողական մեդիաձառայությունների՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի պահանջներին համապատասխանության վերահսկողություն:

Հանձնաժողովը տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների հեռարձակած տեսալսողական ծրագրերի ընտրական օրենսդրության համապատասխանության մշտադիտարկումն իրականացնում է՝ հիմք ընդունելով հետևյալը.

1. տեսալսողական ծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) ուղղակի դիտարկման արդյունքները.
2. տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում մուտքագրված տվյալները.
3. տեսալսողական մեդիաձառայություններ մատուցողների կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը.
4. ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների և (կամ) նրանց ներկայացուցիչների կողմից Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությունը.
5. պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների, քաղաքացիների կողմից Հանձնաժողով պաշտոնապես ներկայացրած տեղեկատվությունը.
6. Հեռարձակողների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության խախտումների մասին զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները:

Հանձնաժողովն ուղղակի դիտարկումն իրականացրել է պատահական ընտրանքի և հավասարաչափ բաշխման սկզբունքով:

Սույն եզրակացության Հավելված 2-ում զետեղված աղյուսակում ներկայացված են նախընտրական քարոզչության՝ 2026 թվականի մայիսի 8-ից հունիսի 5-ն ընկած ժամանակահատվածում տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին հատկացված եթերաժամի վերաբերյալ տվյալներ՝

- անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը.
- վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը.
- լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը.
- այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը.
- լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ լրատվական թողարկումներից զատ այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը ներառում է ոչ միայն դրական, այլ նաև չեզոք և բացասական անդրադարձերը:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը Ազգային ժողովի, Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ օրը, Ազգային ժողովի, Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանու հերթական ընտրությունների ժամանակ նաև 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 2 օր առաջ հրապարակում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրական օրենսդրության պահանջների կատարման մշտադիտարկման արդյունքները և Հանձնաժողովի եզրակացությունը տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ:

Հանձնաժողովը 2026 թվականի մայիսի 18-ին ընդունել է «Տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը հրապարակելու մասին» թիվ 54-Ա որոշումը,³ որը ներառել է 2026 թվականի մայիսի 8-ից 14-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքները: Նշված տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի 10-րդ օրը՝ 2026 թվականի մայիսի 18-ին:

Հանձնաժողովը 2026 թվականի մայիսի 27-ին ընդունել է «Տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը հրապարակելու մասին» թիվ 59-Ա որոշումը⁴, որը ներառել է 2026 թվականի մայիսի 8-ից 24-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքները:

³ Որոշմանը կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ <https://tvradio.am/wp-content/uploads/2026/05/54-%D4%B1-1.pdf>

⁴ Որոշմանը կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ <https://tvradio.am/wp-content/uploads/2026/05/59-%D4%B1-1.pdf>

Նշված տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի 20-րդ օրը՝ 2026 թվականի մայիսի 27-ին:

Տեղեկատվությունը, որը ներառել է 2026 թվականի մայիսի 8-ից հունիսի 5-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը, պետք է հրապարակվի և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվի ընտրությունների արդյունքների ամփոփման համար Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 2 օր առաջ՝ 2026 թվականի հունիսի 12-ին:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑՔ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026 թվականի մայիսի 4-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին նախընտրական քարոզչության ժամանակ հանրային տեսալսողական հեռարձակողի և հանրային լսողական հեռարձակողի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս հեռարձակողների կողմից եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը սահմանելու մասին» թիվ 111- Ա որոշումը:⁵

Ընտրական օրենսգրքի համաձայն՝ Ազգային ժողովի, Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում կազմակերպում է նախընտրական բանավեճեր՝ ապահովելով մասնակցության հավասար պայմաններ բոլոր կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար: Նախընտրական բանավեճերի թեման, ձևաչափը և կանոնները որոշում է Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը: Նախընտրական բանավեճերը հեռարձակվում են ուղիղ եթերով: Ազգային ժողովի ընտրությունների դեպքում նախընտրական բանավեճերի քանակը չպետք է պակաս լինի երեքից՝ յուրաքանչյուրն առնվազն 90 րոպե տևողությամբ, իսկ բանավեճերից առնվազն մեկին պետք է հրավիրվեն միայն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների առաջին համարի թեկնածուները: Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցություն (կուսակցությունների դաշինք) պետք է հնարավորություն ունենա մասնակցելու հավասար թվով նախընտրական բանավեճերի:

«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» և «ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» ծրագրերի ուղիղ եթերում նախընտրական բանավեճերը հեռարձակվել են 2026 թվականի հունիսի 1-ին, 2-ին և 4-ին:

2026 թվականի հունիսի 1-ին ժամը 21:01-ին հեռարձակված նախընտրական բանավեճին մասնակցել են ընտրություններին մասնակցող 18 քաղաքական ուժերից 17-ը: Բանավեճին չի մասնակցել «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցությունը: Բանավեճի տևողությունը կազմել է 240ր 13վ:

2026 թվականի հունիսի 2-ին ժամը 21:01-ին հեռարձակված նախընտրական բանավեճին մասնակցել են ընտրություններին մասնակցող 18 քաղաքական ուժերը: Բանավեճի տևողությունը կազմել է 236ր 32վ:

2026 թվականի հունիսի 4-ին ժամը 21:32-ին հեռարձակված նախընտրական բանավեճին մասնակցել են ընտրություններին մասնակցող 18 քաղաքական ուժերից 15-ը: Քաղաքական ուժերից «Ռեֆորմիստների» կուսակցությունը, «Բարգավաճ Հայաստան»

⁵ Նշվածին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://res.elections.am/images/Decisions/0-2026/04.05.26/111_A_04-05-2026.pdf

կուսակցությունը և «Հայաստան» կուսակցությունների դաշինքը մերժել են բանավեճին մասնակցելու հրավերը, իսկ «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության ընտրական ցուցակի առաջին համարը լքել է բանավեճի դահլիճը մեկնարկից 9ր 26վ անց: Բանավեճի տևողությունը կազմել է 246ր:

Հայաստանի Հանրային հեռարձակողը ապահովել է նախընտրական բանավեճերի մատչելիությունը լսողության խնդիրներ ունեցող սպառողների համար՝ տեղեկատվությունը ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 93-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ Ընտրություններին մասնակցող կուսակցությունն իրավունք ունի անվճար օգտվելու հանրային տեսալսողական հեռարձակողի եթերաժամից ոչ ավելի, քան 90 րոպե, հանրային լսողական հեռարձակողի եթերաժամից՝ ոչ ավելի, քան 150 րոպե, իսկ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս հեռարձակողների եթերաժամից՝ ոչ ավելի, քան 25-ական րոպե:

Ընձեռած անվճար վերոնշյալ եթերաժամերից կուսակցություններն օգտվել են մասնակի, ինչը փաստում է հավելված 2-ում ներկայացված մշտադիտարկման ցուցանիշների աղյուսակը:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքով սահմանված հավասար հնարավորությունների ապահովման սկզբունքը և միջանկյալ եզրակացությունում առկա ակներև շեղումը, գրություն է հղել «ՖՐԻ ՆՅՈՒՉ» ՍՊ ընկերությանը պարզելու՝ արդյոք մյուս կուսակցությունները տեղեկացվել են բացի օրենքով սահմանված 25 րոպեներից, լրացուցիչ անվճար րոպեներ տրամադրելու պատրաստակամության մասին՝ հաշվի առնելով, որ «ԱԼՅԱՆՍ» առաջադիմական ցենտրիստական և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություններին 2026 թվականի մայիսի 8-ից մինչև 24-ն ընկած ժամանակահատվածում տրամադրվել է համապատասխանաբար 32' 43" և 44' 11" տևողությամբ անվճար րոպե եթերաժամանակ: Որին ի պատասխան «ՖՐԻ ՆՅՈՒՉ» ՍՊ ընկերությունը նշել է. «Սույնով տեղեկացնում ենք, որ «Ֆրինյուզ» հեռուստաընկերության եթերում նախընտրական քարոզարշավի ընթացքում անվճար քաղաքական գովազդի տրամադրման հետ կապված տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, որը շտկելու համար խորհրդարանական ընտրություններին մասնակցության հայտ ներկայացրած բոլոր կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին առաջարկել ենք տրամադրել անվճար եթերաժամանակ՝ հավասարության սկզբունքը ապահովելու համար»:

ՍՏԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄ ԲՈՂՈՔՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում պետական մարմիններից, հասարակական և միջազգային կազմակերպություններից, զանգվածային լրատվամիջոցներից և քաղաքացիներից դիմում-բողոքներ չեն ստացվել:

Ընտրություններին մասնակցող հինգ քաղաքական ուժեր ներկայացրել են յոթ դիմում-բողոք՝ «Լուսավոր Հայաստան», «Նոր ուժ» ռեֆորմիստական, «Հայ Ազգային Կոնգրես» կուսակցություններ, «Ուժեղ Հայաստան» և «Հայաստան» կուսակցությունների դաշինքներ:

«Լուսավոր Հայաստան» և «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցությունների դիմում-բողոքները վերաբերել են «ԱՐՄԵՆԻԱ ԹԻՎԻ» ՓԲ, «Ա-ԹԻՎԻ» ՍՊ և «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունների կողմից Ազգային ժողովի 2026 թվականի հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում անվճար րոպեներից օգտվելու կուսակցությունների իրավունքի իրացմանը խոչընդոտելուն:

«Հայաստան» կուսակցությունների դաշինքի երկու դիմումներից մեկը վերաբերել է «ԱՐՄԵՆԻԱ ԹԻՎԻ» ՓԲ, «ՇԱՆԹ» ՍՊ ընկերությունների և Հանրային հեռարձակողի կողմից քաղաքական գովազդի հեռարձակումը ենթադրյալ ապօրինի մերժմանը, իսկ մյուսը վերաբերել է Հանրային հեռարձակողի կողմից նախընտրական քարոզչության փուլում հավասար և ոչ խտրական պայմաններ ապահովելու օրենսդրական պահանջի առերևույթ խախտմանը:

«Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի դիմումը վերաբերել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քաղաքական գովազդին, որն, ըստ դիմումատուի, պարունակել է «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի իրավունքների խախտում:

«Հայ Ազգային Կոնգրես» կուսակցության երկու դիմում-բողոքներից (վերահասցեագրման կարգով ներկայացվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովից) մեկը վերաբերել է Հանրային հեռարձակողին, սակայն վերջինիս յուրօրյան հարթակում տեղադրված տեսանյութին, իսկ մյուսը՝ Հանրային հեռարձակողի կողմից կազմակերպված երկրորդ բանավեճում հավասարության առերևույթ խախտմանը:

Երկու քաղաքական ուժերի՝ «Լուսավոր Հայաստան» և «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցությունների կողմից ներկայացված դիմում-բողոքների հիման վրա հարուցվել են վարչական վարույթներ, իսկ մնացած դիմում-բողոքներին պատասխանվել է օրենքով սահմանված կարգով:

ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Նշված ժամանակահատվածում Ընտրությունների հետ կապված Հանձնաժողովը հարուցել է յոթ վարչական վարույթ՝ հինգը սեփական նախաձեռնությամբ, իսկ երկուսը բողոքի հիման վրա: Սեփական նախաձեռնությամբ վարչական վարույթները հարուցվել են «ՇԱՆԹ» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «ՇԱՆԹ» տեսալսողական, «ԻՄՊՈՒԼՍ» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «ԳՈՐԾԱՐԱՐ ԱԼԻՔ ԷՖԷՄ 106.5» լսողական, «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «ՖԱՍԹՍՊՈՐՏՍ» տեսալսողական, «ՇԱՐԿ» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «5-ՐԴ ԱԼԻՔ» տեսալսողական և «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» տեսալսողական ծրագրերի մասով, իսկ բողոքի հիման վրա՝ «Ա-ԹԻՎԻ» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «Ա-ԹԻՎԻ» տեսալսողական և «ԱՐՄԵՆԻԱ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության կողմից հեռարձակվող «ԱՐՄԵՆԻԱ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրերի մասով:

«ՇԱՆԹ» տեսալսողական և «ԳՈՐԾԱՐԱՐ ԱԼԻՔ ԷՖԷՄ 106.5» լսողական ծրագրերի մասով վարչական վարույթները հարուցվել են նախընտրական քարոզչությանը վերաբերող տեսալսողական հաղորդումներն առևտրային գովազդով ընդմիջելու արգելքի խախտման հատկանիշներով:

«ՖԱՍԹՍՊՈՐՏՍ», «ԱՐՄԵՆԻԱ ԹԻՎԻ» և «Ա-ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրերի մասով վարչական վարույթները հարուցվել են Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում անվճար՝ 25-ական րոպեներից օգտվելու կուսակցությունների իրավունքի իրացմանը խոչընդոտելու հատկանիշներով:

«5-ՐԴ ԱԼԻՔ» տեսալսողական ծրագրի մասով վարչական վարույթը հարուցվել է ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության վարկաբեկման և նսեմացման տարրեր պարունակող քաղաքական գովազդի հեռարձակման հատկանիշներով, ինչպես նաև

քաղաքական գովազդի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կամ թեկնածուներին բնորոշող խորհրդանիշների կամ անհատականացնող այլ նշանների բացակայության հատկանիշներով:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» տեսալսողական ծրագրի մասով վարչական վարույթը հարուցվել է լրատվական հաղորդման ընթացքում կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական քարոզչության վերաբերյալ անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվության ներկայացման պահանջի խախտման հատկանիշներով:

Հանձնաժողովը նաև գրություններ է հղել Հանրային հեռարձակողի խորհուրդ, որոնցից մեկը վերաբերել է Հանրային հեռարձակողների լրատվական հաղորդման ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական քարոզչության վերաբերյալ անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվության ներկայացման պահանջի առերևույթ խախտմանը, իսկ մյուսը՝ քվեարկության օրը քարոզչական բնույթ կրող նյութ հեռարձակելուն:

Վարչական վարույթների արդյունքում ընդունված վարչական ակտերը⁶ հասանելի են ծանոթացման համար Հանձնաժողովի պաշտոնական կայքում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Անհրաժեշտ ենք համարում ևս մեկ անգամ բարձրաձայնել, որ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված այն դրույթները, որոնց համաձայն սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողները պարտավոր են անվճար եթերաժամ տրամադրել կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին, ոտնահարում են լիցենզավորված տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերությունների իրավունքները: Ինդերահարույց է նաև այն տեսանկյունից, որ լիցենզավորված տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերությունների վրա օրենսդրությամբ արդեն իսկ դրված են բազմաթիվ պարտավորություններ, այդ թվում՝ պետական տուրքի վճարներ, հեռարձակման վճարներ, մի շարք օրենսդրական պահանջների պահպանման պարտավորություններ, որոնք օրեցօր կրճատվող գովազդային եկամուտների և դիտելիության նվազման պայմաններում էլ ավելի են ազդում տեսալսողական մեդիայի բովանդակության որակի վրա: Հարկ է նշել, որ անվճար րոպեներ տրամադրելու պարտավորությունը տարածվում է անգամ այն լիցենզավորված հեռարձակողների վրա, որոնց եթերում իսպառ բացակայում է քաղաքական բաղադրիչը և այս առումով հատկանշական է «ՖԱՍԹՍՊՈՐՏՍ» ՍՊ ընկերության վարչական վարույթի ընթացքում տրված պատասխանը՝ ««ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊԸ-ին պատկանող «ՖԱՍԹՍՊՈՐՏՍ» ծրագիր հեռուստաալիքը հանդիսանում է բացառապես սպորտային հեռուստաալիք, վերջինիս եթերը նախատեսված է սպորտային իրադարձությունների ցուցադրման համար, տվյալ հեռուստաալիքով անգամ բացակայում են լրատվական թողարկումները, այսինքն՝ հեռուստաալիքը որդեգրել է պրոֆեսիոնալ սպորտային հեռուստաալիք լինելու ուղղությունը, հետևաբար նաև քաղաքական առումով դրսևորել և շարունակում է դրսևորել չեզոքություն: Հեռուստաալիքի գործունեությունը միտված է հայ հեռուստադիտողին ներկայացնելու կարևոր սպորտային միջոցառումները, որոնց ցուցադրությունը հիմնականում իրականացվում է անընդհատ և չընդհատվող ռեժիմով, որպիսի պայմաններում հեռուստաալիքը բոլոր իրավիճակներում առաջնորդվում է հիմնական նպատակին համահունչ՝ որպես սպորտային հեռուստաալիք ցուցադրում է բացառապես

⁶ Նշվածին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ <https://tvradio.am/resolutions/>

սպորտային իրադարձություններ: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ խնդրում ենք սույն վարույթի շրջանակներում հաշվի առնել հեռուստաալիքի բնույթը և քաղաքական չեզոքություն պահպանելու կարևորությունը:»:

Հատկանշական է նաև, որ հենց այս շրջանում լիցենզիայի դադարեցման դիմումներ են ներկայացրել սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող երկու ընկերություն:

Այս համատեքստում հարկ է անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ նախընտրական քարոզչությունը զգալիորեն տեղափոխվել է համացանցային տիրույթ՝ նվազեցնելով վճարովի եթերաժամ տրամադրելուց տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների հնարավոր եկամուտները: Միևնույն ժամանակ համացանցում ընտրություններին մասնակից քաղաքական ուժերն անթաքույց կերպով կիրառում են ատելության խոսք, վիրավորանք, տարածում թշնամանք և դրսևորում խտրականություն, այդ թվում՝ քաղաքական հայացքներով պայմանավորված:

Հարկ է արձանագրել նաև, որ թեպետ Ընտրական օրենսգրքով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացրած սոցիալական գովազդների հեռարձակման պահանջը դրված է միայն հանրային հեռարձակողի վրա, սակայն մասնավոր տեսալսողական մեդիաձառայություն մատուցողները, նպաստելով իրազեկված ընտրություն կատարելու համար անհրաժեշտ տեղեկատվության ապահովմանը, իրենց ծրագրերում ևս ներկայացրել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սոցիալական գովազդները:

Մշտադիտարկման ցուցանիշներից ակնառու է, որ առկա է առանձին տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին հատկացված եթերաժամի որոշակի անհամաչափություն: Հանձնաժողովն իրականացրած ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հանգել է այն եզրակացության, որ այդ իրավիճակը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ հանգամանքներով, այդ թվում՝ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից իրենց նախընտրական քարոզչության այս ժամանակահատվածում իրականացված միջոցառումների քանակական բաշխման տարբերություններով, կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից անվճար և վճարովի եթերաժամի օգտագործման, տեսալսողական ծրագրերում հյուրընկալվելու պատրաստակամությամբ:

Այսպիսով, ելնելով վերոնշյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ տեսալսողական մեդիաձառայություն մատուցող ընկերությունների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տրամադրված եթերաժամի արձանագրված անհամաչափությունը չի կարող գնահատվել որպես նախընտրական քարոզարշավին մասնակցող քաղաքական ուժերի համար հավասար պայմանների ապահովման սկզբունքի խախտում: Միաժամանակ, հավասար պայմանների ապահովման սկզբունքի խախտում պետք է դիտարկել լրատվական հաղորդման ընթացքում կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական քարոզչության վերաբերյալ անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվության ներկայացման պահանջի խախտման՝ Հանձնաժողովի կողմից արձանագրված դրվագները, որոնց տրվել է համապատասխան իրավական գնահատական: Լրատվական թողարկումներում անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվության ներկայացման օրենսդրական պահանջի խախտումը հանգեցնում է ընտրական օրենսդրության հիմնարար սկզբունքներից մեկի՝ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև հավասարության սկզբունքի խախտմանը, քանի որ կողմնակալ լուսաբանումը կամ ոչ օբյեկտիվ գնահատականները հասարակության համար ձևավորում են կանխակալ պատկերացումներ՝ խաթարելով ազատ և հավասար մրցակցային միջավայրը:

**ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ՝ 08.05.2026թ.- 05.06.2026թ.



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ
«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» տեսալսողական ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	ՌԵՖՈՐՄԻՍՏՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	75' 45"	0' 00"	7' 57"	703' 35"	711' 32"
2	«ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ» ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	85' 55"	15' 57"	38' 08"	979' 59"	1018' 07"
3	«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)	86' 00"	112' 01"	57' 43"	1153' 17"	1211' 00"
4	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՆՈՐՀԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	66' 00"	0' 00"	3' 35"	973' 33"	977' 08"
5	«ՆՈՐ ՈՒԺ» ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	77' 22"	15' 36"	6' 31"	708' 35"	716' 06"

6	«ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	79' 13"	5' 17"	14' 50"	963' 10"	978' 00"
7	«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	82' 41"	92' 24"	55' 29"	727' 44"	782' 13"
8	«ԱՂԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲԵՎԵՌ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	81' 57"	0' 00"	8' 49"	969' 56"	978' 45"
9	ՔՈՉԱՐԻ ԱՂԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԵՎ ԱՂԳԻ ԶԱՐԹՈՆՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	49' 48"	0' 00"	7' 20"	956' 448"	964' 08"
10	ՀԱՅ ԱՂԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	80' 26"	0' 00"	16' 21"	834' 08"	850' 29"
11	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	74' 50"	2' 19"	33' 57"	975' 44"	1009' 41"
12	ՔՐԻՍՏՈՆԵԱ- ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	77' 02"	0' 00"	16' 16"	959' 43"	975' 59"

13	«ԱԼՅԱՆՍ» ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՑԵՆՏՐԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	53' 31"	0' 00"	5' 04"	0' 00"	5' 04"
14	«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	80' 59"	0' 00"	12' 21"	975' 34"	988' 55"
15	ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՕՐԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	23' 23"	0' 00"	4' 22"	678' 53"	683' 15"
16	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	84' 03"	78' 30"	87' 57"	1166' 33"	1255' 30"
17	ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ԱՌԱՋ» ԱՋԱԿԵՆՏՐՈՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)	86' 00"	104' 58"	103' 16"	935' 27"	1038' 43"
18	«ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	86' 51"	108' 12"	28' 50"	1085' 32"	1114' 22"
19	«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	76' 04"	0' 00"	24' 01"	923' 24"	948' 25"



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ
«ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	ՌԵՖՈՐՄԻՍՏՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	77' 44"	0' 00"	27' 46"	1135' 23"	1163' 09"
2	«ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ» ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	86' 52"	0' 00"	106' 07"	1445' 41"	1551' 48"
3	«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)	90' 00"	116' 59"	165' 19"	2150' 22"	2315' 41"
4	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՆՈՐՀԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	69' 00"	0' 00"	17' 32"	1419' 53"	1437' 25"
5	«ՆՈՐ ՈՒԺ» ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	69' 02"	66' 28"	23' 58"	1030' 16"	1054' 14"

6	«ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	83' 02"	5' 17"	61' 15"	1321' 04"	1382' 19"
7	«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	86' 41"	95' 33"	200' 31"	1442' 19"	1642' 50"
8	«ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲԵՎԵՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	84' 56"	0' 00"	24' 40"	1412' 41"	1437' 21"
9	ՔՈՉԱՐԻ ԱՋԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԵՎ ԱՋԳԻ ԶԱՐԹՈՆՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	52' 08"	0' 00"	27' 15"	1411' 29"	1438' 44"
10	ՀԱՅ ԱՋԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	83' 42"	0' 00"	59' 47"	1016' 46"	1076' 33"
11	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	78' 50"	4' 55"	96' 19"	1329' 27"	1425' 46"
12	ՔՐԻՍՏՈՆԵԱ- ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	79' 57"	0' 00"	45' 40"	1370' 23"	1416' 03"

13	«ԱԼՅԱՆՍ» ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՅԵՆՏՐԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	53' 31"	0' 00"	22' 09"	0' 00"	22' 09"
14	«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	84' 50"	0' 00"	32' 56"	1388' 19"	1421' 15"
15	ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՕՐԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24' 08"	0' 00"	16' 16"	1151' 54"	1168' 10"
16	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	88' 03"	86' 07"	270' 14"	1916' 19"	2186' 33"
17	ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ԱՌԱՋ» ԱՋԱԿԵՆՏՐՈՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)	90' 00"	108' 36"	301' 10"	1967' 15"	2268' 25"
18	«ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	90' 00"	111' 07"	86' 09"	1741' 17"	1772' 52"
19	«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	78' 59"	0' 00"	79' 20"	1271' 06"	1350' 26"



«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ
«ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	ՌԵՖՈՐՄԻՍՏՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	21' 54"	0' 00"	71' 59"	42' 36"	114' 35"
2	«ԲՈՒՆՈՒՆ ԴԵՄ ԵՄ» ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24' 25"	0' 00"	65' 48"	84' 31"	150' 19"
3	«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)	24' 30"	292' 25"	119' 43"	108' 37"	228' 20"
4	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՆՈՐՀԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	23' 53"	0' 00"	49' 26"	0' 00"	49' 26"
5	«ՆՈՐ ՈՒԺ» ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	23' 41"	0' 00"	67' 33"	207' 57"	275' 30"

6	«ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	78' 16"	193' 32"	271' 48"
7	«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24' 31"	558' 24"	386' 37"	380' 54"	767' 31"
8	«ԱՂԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲԵՎԵՌ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	23' 00"	0' 00"	67' 23"	45' 05"	112' 28"
9	ՔՈՉԱՐԻ ԱՂԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԵՎ ԱՂԳԻ ԶԱՐԹՈՆՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	28' 56"	0' 00"	28' 56"
10	ՀԱՅ ԱՂԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	23' 25"	0' 00"	78' 30"	78' 04"	156' 34"
11	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	63' 37"	0' 00"	63' 37"
12	ՔՐԻՍՏՈՆԵԱ- ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	60' 09"	0' 00"	60' 09"

13	«ԱԼՅԱՆՍ» ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՑԵՆՏՐԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24' 36"	0' 00"	40' 58"	0' 00"	40' 58"
14	«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	13' 47"	0' 00"	74' 15"	32' 57"	107' 12"
15	ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՕՐԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	11' 56"	0' 00"	52' 28"	44' 28"	96' 56"
16	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	25' 00"	248' 40"	82' 59"	219' 08"	302' 07"
17	ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ԱՌԱՋ» ԱՋԱԿԵՆՏՐՈՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)	23' 58"	148' 04"	117' 12"	85' 46"	202' 58"
18	«ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	65' 15"	0' 00"	65' 15"
19	«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	23' 24"	0' 00"	80' 55"	254' 32"	335' 27"



«ԱՐՄԵՆԻԱ ԹԻՎԻ» ՓԲԸ
«ԱՐՄԵՆԻԱ» ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	ՌԵՖՈՐՄԻՍՏՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	13' 00"	0' 00"	13' 00"
2	«ԲՈՒՆՈՒՆ ԴԵՄ ԵՄ» ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	20' 57"	0' 00"	15' 27"	0' 00"	15' 27"
3	«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)	27' 47"	290' 00"	76' 55"	175' 13"	252' 08"
4	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՆՈՐՀԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	19' 00"	0' 00"	11' 21"	0' 00"	11' 21"
5	«ՆՈՐ ՈՒԺ» ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	18' 43"	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"

6	«ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	21' 09"	29' 00"	23' 44"	0' 00"	23' 44"
7	«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24' 57"	89' 59"	35' 03"	0' 00"	35' 03"
8	«ԱՂԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲԵՎԵՌ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	23' 53"	0' 00"	14' 10"	0' 00"	14' 10"
9	ՔՈՉԱՐԻ ԱՂԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԵՎ ԱՂԳԻ ԶԱՐԹՈՆՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	3' 01"	0' 00"	3' 01"
10	ՀԱՅ ԱՂԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	23' 16"	0' 00"	20' 12"	0' 00"	20' 12"
11	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	9' 14"	14' 38"	0' 00"	14' 38"
12	ՔՐԻՍՏՈՆԵԱ- ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"

13	«ԱԼՅԱՆՍ» ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՑԵՆՏՐԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	15' 44"	0' 00"	5' 34"	0' 00"	5' 34"
14	«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	16' 30"	0' 00"	12' 22"	0' 00"	12' 22"
15	ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՕՐԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	7' 05"	0' 00"	3' 51"	0' 00"	3' 51"
16	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	25' 17"	188' 15"	78' 16"	191' 40"	269' 56"
17	ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ԱՌԱՋ» ԱԶԱԿԵՆՏՐՈՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)	23' 39"	139' 36"	48' 53"	92' 22"	141' 15"
18	«ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	11' 30"	0' 00"	11' 30"
19	«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	20' 50"	0' 00"	19' 16"	0' 00"	19' 16"



«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ
«Ա-ԹԻՎԻ» ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	ՌԵՖՈՐՄԻՍՏՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	8' 04"	0' 00"	8' 04"
2	«ԲՈՒՆՈՒՆ ԴԵՄ ԵՄ» ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24' 15"	0' 00"	9' 30"	0' 00"	9' 30"
3	«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)	24' 52"	290' 00"	42' 21"	0' 00"	42' 21"
4	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՆՈՐՀԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	25' 00"	0' 00"	6' 09"	0' 00"	6' 09"
5	«ՆՈՐ ՈՒԺ» ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24' 55"	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"

6	«ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24' 05"	0' 00"	10' 14"	0' 00"	10' 14"
7	«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24' 57"	89' 50"	17' 41"	0' 00"	17' 41"
8	«ԱՉԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲԵՎԵՌ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24' 42"	0' 00"	8' 26"	0' 00"	8' 26"
9	ՔՈՉԱՐԻ ԱՉԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԵՎ ԱՉԳԻ ՉԱՐԹՈՆՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	1' 59"	0' 00"	1' 59"
10	ՀԱՅ ԱՉԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	23' 27"	0' 00"	11' 43"	0' 00"	11' 43"
11	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	1' 26"	9' 21"	0' 00"	9' 21"
12	ՔՐԻՍՏՈՆԵԱ- ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"	0' 00"

13	«ԱԼՅԱՆՍ» ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՑԵՆՏՐԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	18' 44"	0' 00"	2' 50"	0' 00"	2' 50"
14	«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	19' 15"	0' 00"	7' 16"	0' 00"	7' 16"
15	ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՕՐԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	7' 50"	0' 00"	0' 59"	0' 00"	0' 59"
16	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24' 57"	231' 18"	44' 57"	0' 00"	44' 57"
17	ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇԵՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ԱՌԱՋ» ԱՋԱԿԵՆՏՐՈՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)	24' 36"	139' 45"	28' 26"	0' 00"	28' 26"
18	«ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00"	0' 00"	6' 50"	0' 00"	6' 50"
19	«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	23' 32"	0' 00"	9' 10"	0' 00"	9' 10"



«ՇԱՆԹ» ՍՊԸ
«ՇԱՆԹ» ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1	ՌԵՖՈՐՄԻՍՏՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	21' 01"	0' 00"	19' 19"	41' 04"	60' 23"
2	«ԲՈՒՆՈՒՆ ԴԵՄ ԵՄ» ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24' 13"	0' 00"	18' 47"	153' 06"	171' 53"
3	«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)	21' 48"	296' 54"	126' 07"	381' 23"	507' 30"
4	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՆՈՐՀԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	27' 00"	0' 00"	24' 25"	34' 00"	58' 25"
5	«ՆՈՐ ՈՒԺ» ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	18' 39"	0' 47"	23' 15"	113' 22"	136' 37"

6	«ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	25' 49"	31' 00"	43' 32"	37' 02"	80' 34"
7	«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	26' 17"	99' 37"	41' 56"	541' 25"	583' 21"
8	«ԱՉԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲԵՎԵՌ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	18' 23"	0' 00"	25' 26"	101' 14"	126' 40"
